

անցեալ եւք զսահմանօք ձեռնադրութեան նախնեաց մերոց: Որչափ բազմացին ի մեզ մատղատունկ նուիրեալք ի կուսակրօնութիւն և ի քահանայութիւն և որչափ յարատեւեսցէ ի մեզ օգի սիմոնականութեան, այնչափ առատացին չարիք և եկեղեցի մեր սուրբ նսեմացեալ խըրթնացի:

Այսու պատասխանադրութեամբ համարելով զմեզ անպարտ կազմալուծութեան հայրենաւանդ օրինաց և կարգաց, զառաւելն թողումք ի կամս Վեհիգ:


Մաղթելով Վեհիգ զօրանալ Տէրամբ ի շինութիւն եկեղեցւոյ և ի մխիթարութիւն հաւատացելոց՝

Մնամ խոնարհ աղօթող

Սահակ կարսղիկոս Կիլիկիոյ

1906 Նոյ, 2

Ի Մայրախնս Սսոյ



Վեհաշնորհ և Արքազան Հայրապետից մերոյ և Մեծի Եպիսկոպոսապետից Տ. Տ. Մկրտչի, Կաթողիկոսիգ Ամենայն Հայոց, մատչիմք ի խոնարհ համբոյր Սուրբ Աջոյն նախագահ և անդամակիցքս Կրօնական Ժողովոյ Ազգային Կեդրոնական Վարչութեան Պատրիարքութեան Հայոց Թուրքիոյ.

Տուեալ էիք կոնգակ յատուկ յ12 Սեպտեմբերի տարւոյս ընդ 1155 համարաւ, և ծանուցեալ էիք այնու թէ ընկալեալ դուով Ձեր ի կողմանց կողմանց գիրս խնդրուածոց ի քահանայից և յաշխարհականաց և լուեալ զթշուառ կացութիւն այրիացեալ քահանայից, անօգնական և անտէրունջ մնացելոց հանդերձ զաւակօք, և գթացեալ Ձեր ի վերայ սոյնպիսեաց, առեալ էիք ինկատ զխնդրունս կրկին ամուսնութեան նոցա, և յանձն առնէիք Կրօնական Ժողովոյ Պատրիարքութեանս, եթէ հարկ լիցի լսելով իսկ զկարծիս թեմակալ Առաջնորդաց և Գաւառական Ժողովոց, քննել

զինդիրն և յայտ առնել զտեսութիւնս մեր ի բանիդ, որպէսզի ընկալեալ Ձեր զայնոսիկ և բազդատեալ ընդ կարծեաց այլոց Աթոռոց և Թեմակարաց, կարող լիջիք զոր պատշաճն իցէ և օրէն, տնօրինել և հրամայել:

Քննեցաւ ըստ հրամանիդ ի լիազոյն գումարման կրօնական ժողովոյս առաջարկ Վեհաշնորհ Տեառնդ, և խոհական խորհրդակցութեան ետ մեզ առիթս, և ահա թէ զինչ եղեն տեսութիւնք ժողովոյս ի վերայ առաջարկեալ ինդրոյն: Որ ինչ և որչափ ինչ յեկեղեցւոյ պահին և պահպանին իբր օրէնք կամ կանոն, ոչ նովին կերպարանաւ և ծանրութեամբ են որակեալ: Է ինչ որ տերունեան կամ առաքելական վճռով է հաստատեալ, և է որ յետոյ յիշխանութեանց և իշխանաւորաց եկեղեցւոյ է հրամայեալ, և սորին դարձեալ կամ յառաջին դարոց անտի գտանին օրինադրեալ, և կամ յետ ժամանակաց կարգադրեալ, և չեն ինչ երկուանք եթէ ոչ ամենեքին այսօրիկ զնոյն ունին նշանակութիւն յառիթս արտօնութեանց և բացառութեանց, զորս իշխանաւորք եկեղեցւոյ կարեն տնօրինել ըստ ներելոյ կամ ըստ պահանջելոյ պարագայից:

Արդ որ ինչ հայր յամուսնական վիճակ պաշտօնէից եկեղեցւոյ, առաքելական օրինօք է հրամայեալ, միանգամ միայն մտեալ գոյ նոցա յամուսնութիւն և ոչ աւելի, յորմէ առիճանէ և իցեն, որպէս յայանի և յատակ ցուցանեն Բանք Առաքելոյն Պօղոսի, «Մարկուազք, ասէ, լինիցին միոյ կնոջ այր», և դարձեալ թէ «Վացուսցես երիցունս, եթէ ոք անարատ իցէ, միոյ կնոջ այր», և դարձեալ թէ «Պարտ է եպիսկոպոսին անարատ լինիլ, միոյ կնոջ այր» (ա, Տիմ. Գ. 12, Տիտ, ա, 6, ա. Տիմ. Գ. 2): Բանք արդարև Բացայայտք, զի որպիսի և մեկնաբանութիւն կամ լիցի տալ միակին լինելոյ պաշտօնէիցն, միշտ հաստատուն մնաոցէ պայման հիմնական միանգամ միայն մտեալ գոյ նոցա յամուսնութիւն: Եւ զայդ ևս քան զևս հաւաստեմք ի համեմատութենէ զոր դնէ Առաքեալն ընդ մէջ նուիրեալ արանց և նուիրեալ կանանց, օրինադրելով վասն նուիրեալ այրեաց թէ «Այլ ընդ այրիս անուանեսցի, միոյ առն կին

լեալ» (Ա. Տիմ. ե. 9): Եւ այս ցուցանէ թէ ոչ զերկուս կամ զերիս միանգամայն ունելոյ խօսի Առաքեալն, զի եթէ բազմակնութիւնն ներեալ էր ի հին օրէնս, այլ ոչ երբէք բազմայրութիւնն, որով և յայտնապէս զերկրորդ ամուսնութենէ այրեաց իմացեալ լինին առաջին բանքն: Արդ եթէ յառաջ քան զնուիրումն յաստուածային պաշտօն, չէր ներեալ արանց կրկին ամուսնացեալ գոլ, զիմրդ հնար իցէ զկնի նուիրելոյն առնել զայդ, և զառաքելականն առ ոչինչ համարել բացայայտ օրինադրութիւն:

Որ ինչ եկեղեցւոյ հիմնական է և էական և նախնական և առաքելական, յայտ անտի է զի չէ այն տարբերեալ ի բաժանեալ եկեղեցիս, և նոյն ընդհանուր և անխախտ սկզբունք, պահին առ ամենեսին, թէպէտ անջատեալք յերերաց: Մի յայդպիսեաց աստի է և այս՝ յԱռաքելոյն հրամայեալ կանոնս, զի ի սկզբանէ անտի եկեղեցւոյ մինչև ցմեր աւուրս, ընդ ամենայն դարս և ընդ ամենայն եկեղեցիս, անազարտ գտանի պահեալ օրէնքն, որ արգելու պաշտօնէից նուիրելոց՝ միւսանգամ՝ մտանել յամուսնութիւն զկնի ձեռնադրութեանն: Հնօրեայ եկեղեցիք յունադաւանք և ասորադաւանք և ամենայն ստեղծեալ բաժանմունք նոցա, համաժիտ են ընդ մեզ ի բանիս: Իսկ լատինադաւանք թէպէտ անդրադոյն ևս յառաջեալ զամուսնացեալն խափանեալ են եկեղեցականութիւն, այլ յընդունիլն զայրիս ի ձեռնադրութիւն՝ համաձայն գտանիմ արևելեայցս համօրէն: Նորադանդք միայն, կարծեցեալ բարեկարգութեանց քմածին հնարիչք, այլազգ վարին ի բանիդ, այլ քաւ ուղղափառ և Առաքելական Սուրբ եկեղեցւոյս մերոյ ի նորաստեղծ նորադանդիցն ուսանիլ զառաքելական կանոնս:

Արդ եթէ եկեղեցական կանոնք և հնաւանդ ընթացք՝ չընդունին ի ձեռնադրութիւն զայրիս կրկին ամուսնացեալս, և մինչև իսկ զմիանգամ ամուսնացեալս ընդ այրի կանանց, և ոչ իսկ ներեն կուսակրօն ձեռնադրելոց ամուսնանալ զկնի ձեռնադրութեան, զիմրդ հնար լիցի զձեռնադրեալ այրիս արտօնել յերկրորդ ամուսնութիւն: Զնջեցնուք ար-

դեօք և ի Մաշտոցէ ձեռնադրութեան զխորագիրն բացայայտ որ կայ ի սկիզբն կիսասարկաւագութեան. «Մինչև ցայս վայր կարէ ամուսնանալ որ զչորս աստիճանն ունի» իսկ ի հինգերորդէն և անդր ոչ կարէ, զի ոչ գոյ հրամանս: Յայտնի ուրեմն է, թէ արտօնութիւն երկրորդ ամուսնութեան այրիացեալ քահանայից, վերիվայր առնէ զառաքելական պատգամս, զտիեզերական եկեղեցւոյ օրէնս, և զընդհանուր յարմարութիւն կանոնաց ուղղափառ և Սուրբ Եկեղեցւոյս մերոյ:

Եւ մի լիցի զխստութենէ օրինացն գանգատս յարուցանել, զի օրէնք ամենայն յիսկութեան անդ իւրեանց զանհատիցն կաշկանդեն զաղիկամի գործողութիւնս, և շնորհն ըստ շնչելոյ հաճոյից և ըստ շարժելոց քմացն գործել, այլ կերպս և ձևս և կոպարս և սահմանս դնեն ի վերայ, զի նուազելով մասնաւորին աճեսցի ընդհանուրն, և զի բարին հասարակաց, օգուտն բազմութեան, վստահութիւնն հանրութեան, ի չափաւորելոյ անտի հաճոյից և քմաց անհատիցն եկեսցեն յարդիւնս: Իսկ օգուտն մեծ և վստահութիւնն հանրային ծագի ի բանիդ ի նուիրականութենէ անտի նուիրեալ պաշտօնէին, որ այնու իսկ զի զրկանաց արկանէ զանձն ընդ ծանրութեամբ, դժուարութեանց յանձն առնու զբռն, յաշխարհայնոց և ի մարմնականաց քեցէ զանձն, նովին իսկ զգենու զհոգևորականութեանն պատիւ, և երևի յաչս ժողովրդեան բարձրագոյն և առաւելագոյն ինչ քան զհասարակ մարդկան աստիճանս: Արդ եթէ սկզբունք զրկման, որ յամենայն պարագայս զոյգ ընթանան ընդ եկեղեցական կենաց, ի նմին իսկ ամուսնական և ընտանեկան կենցաղի ունին զիւրեանց նշանակութիւն, զիմրդ մարթասցին ի մոռացօնս անկանիլ ի կացութիւն այրիացելոց, և նոյն ազատութիւն տացի եկեղեցականաց, որ իբր ի բազումս մեղադրանաց և ծաղուլինի պատճառ ի վերայ աշխարհականաց:

Այլ է ինչ ևս քան զևս ծանրագոյն ի մասինդ: Եթէ ունիցիսք տալ արտօնութիւն այրիացեալ քահանայից մտանել յերկրորդ ամուսնութիւն, տալ տացուք և զարտօնու-

Թիւն, սրտնելոյ, պատրաստելոյ, հրապուրելոյ, բազդատելոյ, քննելոյ և ընտրելոյ զերկրորդ կանայս, միով բանիւ կատարելոյ զամենայն պայմանս զորս աշխարհ իմանայ և ներէ ընդ անուամբ սիրահարութեան: Ներեսցնի արդեօք քահանայից մերոց սքեմաւ և նուիրագործութեամբ հանդերձ, յայսպիսիս զբազիլ օրինաւորաբար, յեկեղեցիս և ի տունս տարածել զզննութիւնս իւրեանց և զհետապընդութիւնս, և որք աւանդատէրն են գազանեաց որտից և խոստովանահարք են կանանց և օրիորդաց, կարող լինին վարիլ ազատութեամբ զոր ունին հետապնդողքն ամուսնութեան, զոր պարտէաք ներել նոցա եթէ ազատ լինէին օրինաւորապէս հետամուտ լինիլ յերկրորդ ամուսնութիւն: Եւ սրպիսի անտեղութիւնք և գայթակղութիւնք չունէին յառաջ գալ օրինօք, եթէ օրէնքն չարդելուին նոցա զերկրորդն ամուսնութիւն: Կարի մեծ է ուրեմն տարբերութիւնն ընդ ամուսնական կենցաղ կազմեալ վաղագոյն և ընդ կենցաղ ամուսնական կազմելի ի նորոյ, և իմաստութեամբ մեծաւ հրամայեցին առարեալք և օրինագրեցին եկեղեցիք և արդելին բացարձակապէս զերկրորդ ամուսնութիւն այրիացեալ քահանայից, զոր և անխախտ պահեաց ցարդ մերս Ս. Եկեղեցի առանց իրիք բացառութեան: Աստանօք և ոչ իսկ յիշատակութեան արժանի համարիմք զառաջարկեալն յոմանց բան, զայրիացեալն ի քահանայից ընդ այրիացեալ երկուհեաց արտօնել յամուսնութիւն, զի ծաղու են արդարն բանքդ, բռնագատեալ ընտրութեամբ մտանել ումէք յամուսնութիւն:

Այլ մի տարագէտ թուեցի եթէ ի դէպ դատեսցուք քննել, թէ քանիք արդեօք իցեն, որոց ի շնորհս փոյթ է սմանց քակել զհնաւանդն և զնախնական կանոն: Արդ նոյն իսկ ամբողջական թիւ քահանայից նուազագոյն ինչ է ի համեմատութիւն թուոց հանրութեան ազգիս, և այլիք ի նոսա ոչ երբէք գտանին լինիլ մեծամասնութիւն, և յայրիս անդ նուազագոյնք յոյժ՝ որք տակուին ի հասակի վերատին ամուսնութեան գտանիցին, զի և ի մէջ աշխարհականաց նուազագոյնք յայրեաց փութան կամ պատշաճ

համարին մտանել յերկրորդ ամուսնութիւն: Իսկ ի մէջ այնոցիկ, որ ի հասակի կրկին ամուսնութեան իցեն, քանիք իցեն որ գտանիցին յօժարակամք ի նոյն, զի ոմանց պակասին միջոցք արտաքինք, այլոց փափաք և գրգիռ, և ոմանց զարձեալ ազգեն պատկառանք և կարծիք ժողովրդեան, եթէ նախապաշարեալ իսկ համարիցին այնոքիկ: Ուրեմն սակաւուց ոմանց և յոյժ սակաւուց միայն յայրիացեալ քահանայից անտի լինէր օգտալի արտօնութեամբն, եթէ ուրեք երբէք հնար լինէր ներել նոցա զերկրորդ ամուսնութիւն, և վասն յոյժ սակաւուց ոմանց, օրէն իցէ արգեօք քակել քանդել զառաքելականն և զնախնականն կանոն, մինչ լմաստունն իսկ խիթալի ասէ գոյ, քակել զցանկ հայրենի:

Այլ զինչ վասն թշուառացեալ եղկելեացն, եթէ իցեն իսկ յոյժ սակաւութիւք, ոչք որպէս ի կոնգակի անդ յիշատակին, գտանին այսիացեալք և անտէրունչք բոլորովին զաւակօք հանդերձ: Նախ զի, եթէ ոչ յանհնարից, գտնեալ ի յոյժ հազուագէտ պատահմանց լիցի չունել այսպիսեաց մայր կամ քոյր, սկեսուր կամ քենի, հօրաքոյր կամ մօրաքոյր, որ զխնամս զաւակացն յանձանձիցէ: Այլ եթէ և այս գիւրութիւն պակասիցի այնպիսոյն, և յանձն իւր զգայցէ փոյժ և գրգիռ ամուսնութեան, եկեղեցին մեր ոչ բռնադատէ երբէք զնա ի զրկումն ամուսնութեան, միայն թէ չներէ նմին ի կարգի քահանայութեան մնալ, և ընդ պաշտօնեայս եկեղեցւոյ համարիլ, զի պաշտօն ոչ յերաւանց է այլ ի շնորհաց, և եկեղեցին ո՛նի կատարեալ իշխանութիւն, պայմանս գնել և կանոնս օրինադրել վասն իւրոց պաշտօնեաց, և զկենցաղ նոցա և զայլ հանգամանս պարստանդել յամենայնի և ըստ թմենայնի: Ոչ որ բռնադատի մտանել ի պաշտօն, և որ մտանեն ի նոյն յօժարութեամբ, յանձն առնու զպայմանս նորին: Եկեղեցին մեր ոչ երբէք զլատինացն ընկալու կանոն, ոչք անհնարին վարկանիւն զձեռնադրելոցն ամուսնութիւն և առ ոչինչ գրեն եթէ պատահիցին իսկ: Եւ ոչ իսկ ի նախատինս և յարհամարհանս ուրուք գրեացի, եթէ վարիցի ոք ազա-

տութեամբն՝ զոր ետ Պօղոս ամուրեաց և այրեաց առ հասարակ, «Ապա թէ ոչ ունիցին ժոյժ, ամուսնացին», (ա. Կորնթ. է. 9), միայն թէ մի յաւակնեացին այլ ևս համարիլ ընդ պաշտօնեայս եկեղեցւոյ, զի եկեղեցին, որպէս և այլ ամենայն իշխանութիւնք առհասարակ, իրաւունս ունին, որպէս ասացաքն և ասեմք դարձեալ, հրամայել և օրինադրել պայմանս և կանոնս վասն հանդամանաց և վասն կենցաղի պաշտօնէից իւրեանց:

Կրօնական ժողով Ազգ. Կեդրոնական Վարչութեան Պատրիարքութեան Հայոց Թուրքիոյ, ուշի ուշով քննեալ զառաջարկեալ խնդիրդ, և առաջի աչաց կալեալ զառաքելական պատգամս, զընդհանուր եկեղեցւոյ օրէնս, զմերոյս եկեղեցւոյ զանխախտ կանոնս, զհամեմատութիւն կարգաց և պատուիրանաց ընդ իրեարս, զանտեղի հետեանս ակնբռև երևեալս, զտիրող կարծիս հաւատացեալ ժողովրդեան, զիրաւունս եկեղեցւոյ ի վերայ պայմանաց պաշտօնէից, զկարի սակաւ թիւ անկելոյն ընդ դժուարութեամբ, և զանուղղակի դիւր ընծայեալն սակաւուցն ըստ ներկւոյ հանդամանաց, յայն յանդեցաւ կարծիս՝ եթէ խնդիր տարագէպ է որ վասն ամուսնութեան այրիացեալ քահանայից յարուցաւ ի վերջնուս, և այն յաւէտ յայնպիսեաց՝ որոց երկիւղած պատկառանք առ եկեղեցին և առ կանոնս նորին՝ չերևին գօլ զօրաւորք:


Այլ Վեհի Ա. Օծութեանդ կոնդակ առաջարկի և հարցումն կարծեաց և տեսութեանց, մեծաւ խոհականութեամբ էր գրեալ, և օգտակար հանդիսացեալ յոյժ, իբր զի առիթս ընծայէր կարևոր լուսաբանութեանց և համաձայն ընթանայր եկեղեցական սովորութեանց, և զառաջս առնոյր դիւրաւ դժպէի պարագայից, որք կարէին սպրդիլ Իցիւ թէ և յամենայն իսկ առիթս հաճէր Վեհաշնորհ Հայրապետդ զնոյն հրամայել կանոն գործոց, և զգլխաւոր ակնարկաց ամուսնու զկարծիս, որով ժողովական որոշմանց վերանորոգին ընթացք, երբ պարագայք ժամանակին չներեն դիւրաւ եպիսկոպոսաց և վարդապետաց և գլխաւորաց կամ ներկայացուցչաց ժողովրդեան գումարիլ ի միւ Որչափ

ինչ լսելք և գիտեմք, ոչ տարբեր ինչ են կարծիք և այլոց մեծաց և գլխաւոր աթոռոց, որք առաքելական և առաքելաւանդ շաւղովք ընթանան: Նոյն եղև և Առաքելական Սրբոյ Եկեղեցւոյս առաքելահիմն աթոռոյդ երջանկայիշատակ Գահակալացն գործ և հրաման, և նոյն լիցի անշուշտ և Աստուածարեալ Կաթողիկոսիդ Ամենայն Հայոց կանոն գործոց անյեղլի: Եւ եկեղեցիս մեր Սուրբ և ուղղափառ որ ի պէսպէս վիշտս և հալածանս, ի տազնապս և տառապանս նահատակեալ, իւրոյ նախնական հաւատոյն և իւրոյ հնաւանդ կանոնաց պահպանութեամբ մնաց ցարդ հաստատուն, զնոյն պահեսցէ և առյապայն զշաւիղ գործոց և վայելեսցէ զարդիւնս բարեաց:

Մատչիմք վերստին ի համբոյր ս. աջոյդ և ի հայցուած օրհնութեանդ և եմք Վեհաշնորհ Հայրապետիդ մերոյ, խոնարհ որդիք.

Մաղաքիա արեւայիսկոպոս Պատրիարք Կ. Պօլսոյ

Մետովք արեւայիս.	Սիւքիասեան	Գրիգորիս արեւայ.Յովհաննէսեան
Վահրամ եպիսկոպոս	Մանկունի	Գաբրիէլ եպիս. ձեկվանիրենեան
Մովսէս եպիս.	Կեօմրիւքենեան	Ղեւոնդ վարդ. Գուրեան
Գրիգորիս վարդ.	Պալաթեան	Տէր Կարապէտ Սեբեանց
Սահակ քնն.	Տէր Սարգսեան	Միքայէլ քահանայ Աւետեան
Կարապէտ քահանայ	Սանսալեան	Գրիգոր քահանայ ձեկպենեան
Հմայեակ քահանայ	Էփսէրենեան	



Նորին Սրբազնագոյն Օծուքիւն

Վեհ. Տ. Տ. ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ամենայն Հայոց  
 եւ Մայրագոյն Պատրիարք համազգայական Մայր-Աթոռոյ  
 ի Ա. Էջմիածին

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ Ս. ՀԱՅՐԱՊԵՏ

Ընկալեալ զԿոնդակ Վեհ. Ս. Օծութեանդ ընդ համարաւ 1156, և տեղեկացեալ Բարձր հրամանաց Վեհապետիդ, կոչեցաք զԵպիսկոպոսուհնս և զժայրագոյն վարդա-